յուհու գալուստը աւետելու և շնորհաւորելու համար։

Որպէս հնագէտք և բանագէտք ասացին՝ այս գիւղուհին Կասպից ծովի չաստուածուհին է, Բագուի ծովեղերեայ քարափան վրայ կանգնեցրած (մեր հին եկեղեցւոյ տեղը) իբրեւ պաշտպան նաւավարաց և յատկապէս Բագու քաղաքի, բայց ափսոս որ՝ ոչ մի գրի նշան կայ վրան։

8. Զարդարան գիւղի մօտ մի բարձրահայեաց բլուրի վրայ անտառի մէջ ուխտատեղին է «Խաչասեռ» անուամբ, որ մի խաչքար է, որի անունով և տեղն է յիշւում, այն է «Խաչասեռ»-սեռ՝ ըստ Ղարաբաղցւոց թիւնէ . . . ։

Այս Խաչասեռից երեւում է համարեա Ջամախին և Ջամախւոյ ամբողջ գաւառը. նոյնպէս և լայնատարած դաշտը, երկաթուղւոյ գնացքի ծուխը, Կուր և Երասխ գետերը, և հեռուից Ղարաբաղու լեռները, վերջապէս մի պատուական և վայելուչ տեսարան, որ վայելում են անշնորհք Զարդարանցիք, որք հարիւր տուն Հայ են, ունին և եկեղեցի հասարակ չէնք փոքրաղիր յանուն Ս. Աստուածածնի, որոց (1889 թուի օգոստոսին այցելութիւն գնացած միջոցիս ինձ հետ ունելով և Բագուի մեր եկեղեցական դպրոցաց Տեսուչ պ. Աստուածատուր Գալստեանցին, որ ծնունդ է նոյն Զարդարանի, որոյ և հայրենիքն է, նոյնպէս և գաւառի գործակալներին, Խորէն և Թադէոս քահանայից, և սարկաւագ Մուշեղ Մամիկոնեանին, 2-3 օր խօսեցինք և քարոզեցինք թէ եկեղեցւոյ մէջ և թէ ծերունի Յովհաննէս քահանայի տանը, ուր և իջեւանել էինք, որ դպրոցի պատրաստութիւն տեսնեն, և որդիքը կրթել տան, որք և իբրեւ համոզուած մեր խօսքերից, սիրով խոստացան դպրոցի համար հոգս անել[1]), բայց դեռ մտածում են և ծանր են շարժում, և զարմացք չէ, վասն զի խեղճ Հայերը անտառի մէջ բնակելով և թուրքերից շրջապատած լինելով՝ հազիւ իրենց

---

[1])1893 թուի յուլիսին դարձեալ գնալով Զարդարան գիւղը յիշեալ պ Ա. Գալստեանցի հետ՝ յիշեցրինք նոցա իրենց պարտքը և խոստմունքը, որք և գրով խոստացան չինել և պահել դպրոցը. ուստի և դպրոցի տեղը որոշելով հիմն օրհնեցինք։ Գիւղից բարձր մի վայելուչ տեղ։